

# **«ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՆԱԽԱԳԻԾ**

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

### **ՕՐԵՆՔ**

**«ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Մարդու վերարտադրողական առողջության եվ  
վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության  
2002 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-474-Ն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասում  
«ոլորտների գործադիր» բառերը փոխարինել «հարցերով լիազորված  
պետական կառավարման» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում և 17-րդ հոդվածի 2-րդ  
մասում «ոլորտի հանրապետական գործադիր» բառերը փոխարինել  
«հարցերով լիազորված պետական կառավարման» բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասում «Հայաստանի  
Հանրապետության առողջապահության ոլորտի գործադիր» բառերը  
փոխարինել «առողջապահության հարցերով լիազորված պետական  
կառավարման» բառերով:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման  
օրվան հաջորդող տասներորդ օրը:

